

3. It is justified that teaching HIV/AIDS knowledge should be conducted in middle and high grades of secondary school (medical, sanitary and hygienic issues, sexual education, family upbringing - in middle grades; moral, social and legal aspects of HIV/AIDS - in high grades).
4. The most effective methods and ways of HIV/AIDS education are presented, their particularities and efficiency of their joint usage have been revealed.
5. Importance of family upbringing of HIV education has been studied. The importance of sound “parent-child” interpersonal and trustful relationships in the process of HIV prevention has been addressed. The key elements of those relationships have been studied.
6. Personal and professional qualities (pedagogical skills, tact, knowledge on the issues of health care, psychological expertise, moral and humanitarian characteristics, culture of communication with schoolchildren, etc.) of teachers and requirements presented to them have been reviewed.
7. Based on the analysis of the results of sociological polls on the issue, conducted among school children, the importance of education on the issues of HIV/AIDS at school has been addressed.

**Theoretical value of the research.** Full theoretical analysis of the issue has allowed to reveal and present objective and subjective factors of the activities on HIV/AIDS education and prevention conducted at comprehensive school, their causality, psychological and pedagogical appropriateness, characteristics of effective organization of educational process, requirements presented to a teacher, involving family into the process of prevention.

**The practical value of the research.** Scientific and pedagogical study and results of the sociological surveys may be used for organizing process of HIV/AIDS education at comprehensive schools, for training teachers-specialists, for activities on raising parents’ HIV/AIDS awareness, as well as for the process of forming healthy life style and responsible behaviour among children aimed at HIV prevention among them.

**Structure and volume of the work.** The thesis consists of an introduction, three chapters, conclusions, list of references, appendix. The volume of dissertation is 157 computer pages.



**«Հ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՏԱԹԵՎԻԿ ՄՈՒՇԵՂԻ ՆԱՍԻՅԱՆ**

**ՄԻԱԿ/ԶԻԱՀ-Ի ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԴՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ԴՐԱ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ**

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

TATEVIK M. NASILYAN

**THE IMPORTANCE OF HIV/AIDS AWARENESS IN SECONDARY SCHOOLS AS A MEANS OF ITS PREVENTION**

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Կ. Հարությունյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վ. Ա. Բրուտյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հուլիսի 4-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. հունիսի 3-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01 - “Theory and history of pedagogics”.

The defense of the dissertation will be held at 14:00, on July 4, 2014, at the Yerevan State University (address: 0025, Abovyan str. 52a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203)

**S U M M A R Y**

**The relevance of dissertation theme.** Nowadays HIV/AIDS is considered to be a serious threat to the whole world. HIV/AIDS problem is actual for our country as well.

At the present stage of the medical science development, when a radical treatment of HIV hasn't been found yet, the main direction of struggle against HIV/AIDS still remains its prevention. Young people and adolescents throughout the world remain vulnerable to HIV infection due to their unsafe sexual behaviour, injecting drug use, as well as lack of access to services on HIV/AIDS prevention and information. It is possible to reduce the vulnerability of young people and adolescents to HIV providing them with relevant knowledge, ensuring their adherence to healthy life style, building their skills to resist peer pressure and making balanced decisions. All that is preferably to implement among the school-age children, by which the importance and relevance of the dissertation's theme are preconditioned.

**The objectives of the research.** Investigate the real state in our educational system related to HIV/AIDS prevention on the base of theoretical and practical analysis, to substantiate the necessity of providing HIV/AIDS knowledge in the school educational process as an important element of HIV prevention, considering the national peculiarities, moral values, offering new educational methods and means, involving into the process the “family” social structure.

**Scientific novelty of the research:**

1. The research presents psycho-social and pedagogical analyses of the problem related to HIV prevention among school children.
2. The key factors impeding HIV prevention have been revealed (social and economic conditions, loss of national and moral values, deviant behaviour of children, weakening collaboration between family and school, etc.).

3. Обосновано, что преподавание знаний по ВИЧ/СПИДу необходимо проводить в средних и старших классах общеобразовательных школ (вопросы по медицине, санитарно-гигиеническом, половом и семейном воспитании - в средних классах, а моральные, социальные и правовые проблемы ВИЧ/СПИДа - в старших классах).
4. Представлены наиболее эффективные методы и средства преподавания знаний по ВИЧ/СПИДу, выявлены особенности и эффективность их совместного использования.
5. Исследована важность семейного воспитания в процессе обучения знаниям по ВИЧ/СПИДу. Выявлена важность здоровых межличностных и доверительных взаимоотношений "родитель-ребенок" в процессе профилактики ВИЧ/СПИДа, рассмотрены основные элементы этих отношений.
6. Изучены личностные и профессиональные качества педагога-специалиста и требования предъявляемые к ним (педагогические навыки, такт, знания по медицине и здравоохранению, психологическая компетентность, морально-гуманитарные качества, культура общения с школьниками и т.д).
7. На основе анализа результатов социологических опросов по проблемам ВИЧ/СПИДа, проведенных среди школьников и педагогов отмечена необходимость обучения знаниям ВИЧ/СПИДа в школе.

**Теоретическая значимость исследования.** Комплексный теоретический анализ проблемы позволил выявить и представить объективные и субъективные факторы, влияющие на процесс обучения знаниям по ВИЧ/СПИДу и его профилактики в школе, а также ее причинность, психо-педагогические закономерности, особенности эффективной организации процесса обучения, требования, предъявляемые к педагогу-специалисту, вовлечение семьи в процесс профилактики.

**Практическая значимость исследования.** Научно-педагогическое исследование и результаты социологических опросов могут быть использованы: в общеобразовательных школах для организации процесса обучения знаниям по ВИЧ/СПИДу, в подготовке педагогов-специалистов, и в мероприятиях по повышению уровня знаний по вопросам ВИЧ/СПИДа у родителей, а также в процессе формирования здорового образа жизни и ответственного поведения у детей с целью профилактики ВИЧ/СПИДа.

**Структура и объем диссертации.** Диссертационная работа изложена на 157 страницах компьютерного текста. Состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

## ԱՅԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Թեմայի արդիականությունը**

Այսօր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը (մարդու իմունային անբավարարության վիրուս, ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ) լուրջ սպառնալիք է աշխարհի ողջ բնակչության համար, սպառնալիք՝ նրա համընդհանուր սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեկեցությանը և միլիոնավոր մարդկանց առողջությանը:

Երբ ավելի քան քառորդ դար առաջ ՁԻԱՀ-ը գուժեց իր գոյությունը, քչերը կարող էին կանխատեսել, թե ինչ արագությամբ կգարգանա համաճարակը: ՁԻԱՀ-ով առաջին հիվանդը գրանցվել է 1981թ., իսկ արդեն 2012թ. դրությամբ աշխարհում կա մոտ 35,3 մլն ՄԻԱՎ-ով ապրող մարդ: Համաճարակն արդեն խլել է ավելի քան 22 մլն մարդկային կյանք: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրն արդիական է նաև մեր հանրապետության համար: 1988թ.-ից մինչև 2014թ. փետրվարի 28-ը ՀՀ-ում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1649 դեպք: ՄԻԱՎ-ով վարակվածների զգալի մեծամասնությունը (72,4%) 20-39 տարիքային խմբում է:

Բժշկագիտության զարգացման արդի փուլում, երբ դեռևս ՄԻԱՎ վարակի արմատական բուժում չի գտնվել, պայքարի գլխավոր ուղղությունը շարունակում է մնալ կանխարգելումը, որի համընդհանուր ճանաչում ունեցող ուղղություններն են՝ բնակչությանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, կանխարգելման միջոցների մատուցում ու դրանց օգտագործման հմտությունների ուսուցանում, անվտանգ վարքագծի ձևավորում: Միայն սեփական առողջության և վարքագծի նկատմամբ մարդկանց գիտակցված և պատասխանատու վերաբերմունքի դեպքում է հնարավոր ՄԻԱՎ-ի տարածումը էապես սահմանափակել, իսկ բնակչության որոշ խմբերի շրջանում՝ անգամ կասեցնել: Բազմաթիվ երկրների, նաև Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նպատակաուղղված, համալիր միջոցառումների շնորհիվ հնարավոր է կասեցնել համաճարակի զարգացումը, հասնել ՄԻԱՎ-ի տարածման տեմպերի նվազեցման:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք հայ և ռուս գիտնականներ, բժիշկներ, մանկավարժներ (Ս.Գրիգորյան, Ռ.Օհանյան, Ա.Պապոյան, Ժ.Պետրոսյան, Լ.Շահբազյան, Ա.Հարությունյան, Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան, Ա.Մուրադյան, Ս.Զուհուրյան, Վ.Բիկովա, Կ.Գուրևիչ, Լ.Շիպիցինա, Վ.Ռադիոնով, Մ.Ստուպնիցկայա և այլոք):

Բազմաթիվ խնդիրներ առաջացրած ՄԻԱՎ վարակը նաև վարքագծային հիմնախնդիր է: Համաճարակի տարածումը կանխելու կարևորագույն ուղին մարդկանց մտածելակերպի և վարքագծի փոփոխումն է՝ ռիսկային վարքագծի (թմրամիջոցների, ալկոհոլի չարաշահում, անպաշտպան

սեռական հարաբերություններ և այլն) սահմանափակմամբ, որը նախընտրելի է սկսել դպրոցական տարիքից, որով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի կարևորությունը և արդիականությունը:

ՄԻԱՎ-ով կարող է վարակվել յուրաքանչյուրը, սակայն դրան առավել ենթակա են այն անձինք, որոնք պատկանում են ոչ անվտանգ վարքագիծ ցուցաբերող խմբերին: Ողջ աշխարհում պատանիները և երիտասարդները համարվում են ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խումբ՝ ոչ անվտանգ սեռական վարքագծի, թմրամիջոցներ օգտագործելու և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվական և կանխարգելման ծառայությունների անհասանելիության հետևանքով: ՄԻԱՎ-ի նկատմամբ պատանիների և երիտասարդների խոցելիությունը պայմանավորված է մի շարք վարքագծային, կենսաբանական և սոցիալ-տնտեսական գործոններով:

ՄԻԱՎ-ի նկատմամբ պատանիների և երիտասարդների խոցելիությունը կարելի է նվազեցնել՝ նրանց համապատասխան գիտելիքներով զինելով, առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում, ճնշումներին դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու հմտություններ ձևավորելով:

Ժամանակակից հասարակությունը մեծ ուշադրություն է դարձնում աճող սերնդի առողջությանը: Սոցիալական, բնապահպանական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների լուծումը մարդկանցից պահանջում է մտավոր, ստեղծագործական, բարոյական և ֆիզիկական ներուժի բարձր մակարդակ, որի շնորհիվ նրանք ի վիճակի են արդյունավետ և առողջ կենսագործունեության: Դրանից ելնելով կրթության հիմնական խնդիրն է դառնում դաստիարակել այնպիսի քաղաքացի, որի կենսական արժեքներից կարևորագույնն առողջ ապրելակերպն է: Հաճախ պատանիները և երիտասարդներն ընկալվում են որպես ամենից առողջ տարիքային խումբ, մինչդեռ վերջին հետազոտությունները պարզել են, որ նրանց առողջությունը լրջորեն վտանգված է: Ներկայում, երբ պատանիների և երիտասարդների առողջությանը սպառնացող չարիք են դարձել ալկոհոլի, ծխախոտի չարաշահումը, թմրամիջոցների օգտագործումը, վաղաժամ և անցանկալի հղիությունը, ՄԻԱՎ վարակը և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունները, չափազանց կարևոր է նրանց համապատասխան գիտելիքներով զինելը, առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում, կշռադատված որոշումներ կայացնելու հմտություններ ձևավորելը, որն անհրաժեշտ է սկսել դպրոցական տարիքից:

Իրենց աշխատանքներում առողջ ապրելակերպի ձևավորման հիմնահարցերին են անդրադարձել մի շարք գիտնական-մանկավարժներ, հոգեբաններ, սոցիոլոգներ (Է.Վայներ, Ե.Ֆեդորենկո, Ս.Սիլանտև, Վ.Կասատկինա, Ա.Զարեցկայա և այլք), որոնց հետազոտությունները ներկայացված են մեր աշխատանքում:

## НАСИЛЯН ТАТЕВИК МУШЕГОВНА

### ВАЖНОСТЬ ПРИОБРЕТЕНИЯ ЗНАНИЙ О ВИЧ/СПИДе В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ КАК ВАЖНОЕ СРЕДСТВО ДЛЯ ЕГО ПРОФИЛАКТИКИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 4-го июля 2014 года в 14<sup>00</sup> на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52<sup>а</sup>, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

### РЕЗЮМЕ

**Актуальность темы:** Сегодня ВИЧ/СПИД является серьезной угрозой для населения всей планеты. Проблема ВИЧ/СПИДа актуальна и для нашей страны. На современном этапе развития медицины, когда радикальное лечение ВИЧ-инфекции еще не найдено, профилактика остается основным направлением в борьбе с ВИЧ-инфекцией.

Во всем мире подростки и молодежь считаются ВИЧ-уязвимыми, вследствие их небезопасного сексуального поведения, употребления наркотиков и в связи с недоступностью информации и услуг по профилактике ВИЧ/СПИДа.

Уязвимость подростков и молодежи по ВИЧ/СПИДу можно снизить, вооружая их соответствующими знаниями и развивая навыки, направленные на формирование ответственного поведения, ориентированного на здоровый образ жизни и противостояния давлению, при принятии сбалансированного решения. Все это предпочтительно начинать в школьном возрасте. Именно этим обусловлены важность и актуальность темы диссертации.

**Цель исследования:** Исследовать учебно-воспитательную работу по профилактике и образованию по вопросам ВИЧ/СПИДа, проводимую в школьной образовательной системе. На основе теоретического и практического анализа обосновать необходимость формирования знаний по ВИЧ/СПИДе в учебно-воспитательном процессе как важного фактора профилактики ВИЧ/СПИДа, с учетом национальных особенностей, моральных ценностей, предлагая новые методы и средства обучения, включая в данную деятельность также социальную структуру «семья».

### **Научная новизна исследования:**

1. В работе был проведен социально-психологический, медицинский и педагогический анализ проблем по профилактике ВИЧ/СПИДа у школьников.
2. Были выявлены основные факторы, препятствующие профилактике ВИЧ/СПИДа (социально-экономические условия, утеря национальных и моральных ценностей, девиантное поведение детей, ослабление связи семья-школа и т.д.).

հաղորդակցում, մանկավարժական տակտ, վարպետություն, երկխոսության ունակություն (կուլտուրա):

12. Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները փաստեցին, որ այսօր Հայաստանի բնակչության գերակշիռ մասը (ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ) անտեղյակ է ՄԻԱՎ/ՁԻԱՀ չարիքի մասին, չունի բավարար գիտելիքներ դրա վտանգավորության և կանխարգելման միջոցների մասին: Սոցիոլոգիական հարցումները հաստատեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման կարևորությունն ու անհրաժեշտությունը դպրոցում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1. Նասիլյան Ս.Մ., Գոգինյան Գ., Ընտանիքում երեխաների սեռական դաստիարակության ազգային առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2006, 3 (11), էջ 131-133:
2. Նասիլյան Ս.Մ., ՄԻԱՎ-ի մասին գիտելիքների ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցում, «Մանկավարժական միտք» հանդես, 2008 (1), էջ 30-35:
3. Նասիլյան Ս.Մ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը նպաստող հիմնական գործոնները «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2008, 2 (18), էջ 131-133:
4. Նասիլյան Ս.Մ., Դպրոցում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությունը, «Մանկավարժական միտք» հանդես, N 1-2, 2009թ., էջ 119-126:
5. Նասիլյան Ս.Մ., Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները ՄԻԱՎ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում, «Վասն Արդարության» իրավական-գիտամեթոդական հանդես, 2009, 1-2 (68-69), էջ 81-86:
6. Նասիլյան Ս.Մ., Ազգային բարոյական արժեքների ազդեցությունը ՄԻԱՎ վարակի կանխարգելման գործում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, 2011 (1-2), էջ 18-22:
7. Հարությունյան Ն., Նասիլյան Ս., «Առողջ ապրելակերպի» գիտելիքների իմացությունը դպրոցում որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման կարևոր նախապայման, «Մանկավարժական միտք» հանդես, 2011 (3-4), էջ 7-12:
8. Նասիլյան Ս.Մ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների իմացության աստիճանը որոշող սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն (ուսուցիչների և աշակերտների շրջանում), «Մանկավարժական միտք» հանդես, 2013 (1-2), էջ 17-24:
9. Նասիլյան Ս.Մ., ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների իմացությունը որպես վարքագծային շեղումների կանխարգելման միջոց, «Որակյալ ուսուցման հիմնախնդիրները ՀՀ Հանրակրթական դպրոցներում» ՀՀ ԿԳ նախարարության և «Մանկավարժական նախաձեռնություն Հայկական ասոցիացիա» ՀԿ-ի համատեղ գիտաժողովի հողվածների ժողովածու, Մաս I, 2013, էջ 65-71:

Առողջ ապրելակերպի և սեռական դաստիարակության ընդգրկումն ուսումնական ծրագրերում նման է առողջությանը սպառնացող վարակիչ հիվանդությունների դեմ համընդհանուր պատվաստմանը՝ այն կարող է պատանհիններին և երիտասարդներին պաշտպանել վարքագծային շեղումներից, ինչպես նաև նախապաշարմունքներից ու մոլորություններից և հետագա կյանքում դառնալ նրանց առողջության գրավականը:

Կրթական համակարգը չափազանց կարևոր դեր ունի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում: Այսօր ՀՀ հանրակրթական դպրոցներում նախատեսված «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակներում հնարավոր չէ արդյունավետ լուծել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման խնդիրները, ինչի մասին վկայում են տարբեր սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Ատենախոսությունում առաջադրված խնդիրը կարևորվում է նրանով, որ այսօր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը լուրջ վտանգ է ներկայացնում ամբողջ ազգի՝ մասնավորապես պատանհինների և երիտասարդների առողջությանը, ազգի պահպանմանն ու հարատևմանը:

**Հետազոտության նպատակը**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դպրոցի կրթական համակարգում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման և կանխարգելման նպատակով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների առկա վիճակը, տեսական և գործնական վերլուծությունների հիման վրա հիմնավորել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման անհրաժեշտությունը որպես կանխարգելման կարևոր միջոց՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, բարոյական արժեքները, առաջադրելով ուսուցման նոր մեթոդներ և միջոցներ, այդ աշխատանքներում ներգրավելով նաև «ընտանիք» սոցիալական կառույցը:

**Հետազոտության օբյեկտը**

Հետազոտության օբյեկտը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի՝ որպես սոցիալ-հոգեբանական, մանկավարժական հիմնախնդրի ուսումնասիրության համակարգն է դպրոցում:

**Հետազոտության առարկան**

Հետազոտության առարկան հանրակրթական դպրոցներում աշակերտներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման մանկավարժական պայմանների ապահովումն է՝ որպես դրա կանխարգելման կարևոր գործոն:

**Հետազոտության վարկածը**

ՀՀ հանրակրթական դպրոցներում աշակերտները ձեռք կբերեն կայուն գիտելիքներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին և կանխարգելման նպատակով կորսևորեն համապատասխան անվտանգ վարքագիծ, եթե.

- Մշակվեն և իրագործվեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման և կանխարգելման առավել արդյունավետ պետական քաղաքականություն և համապատասխան օրենսդրական դաշտ:
- Ստեղծվեն երեխայի առողջության պահպանման, նրա ֆիզիկական և մտավոր զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ:
- Մշակվեն արդյունավետ ուսումնական ծրագրեր աշակերտներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների հաղորդման համար՝ ապահովելով ուսուցման գործընթացի անընդհատություն և հետևողականություն:
- Ստեղծվի «աշակերտ-ուսուցիչ-ծնող» համագործակցության արդյունավետ համակարգ:
- Պատրաստվեն համապատասխան մասնագետ-մանկավարժներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման համար:

**Հետազոտության խնդիրները**

Հետազոտության նպատակն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ՄԻԱՎ վարակի պատճառագիտությունը, ախտածագումը և վարակի փոխանցման ուղիները:
2. Ուսումնասիրել ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցները և դրան նպաստող հիմնական գործոնները՝ երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակը, պետական քաղաքականությունը, օրենսդրական դաշտը, ազգային բարոյական արժեքները, լուսավորչական և դաստիարակչական աշխատանքները:
3. Բացահայտել ընտանիքի դերը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում:
4. Վերլուծել «ուսուցիչ-աշակերտ-ծնող» համագործակցությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում:
5. Բացահայտել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գիտատեսական, հոգեբանական և մանկավարժական հիմքերը:
6. Վերլուծել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությունը:
7. Առաջադրել դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքներ ուսուցանող մասնագետ-մանկավարժին ներկայացվող պահանջներ:
8. Կազմել հարցաթերթիկներ և հիմնախնդրի վերաբերյալ դպրոցում անցկացնել սոցիոլոգիական հարցումներ ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների շրջանում:

**Ատենախոսության գիտական նորույթը**

1. Աշխատանքում սոցիալ-հոգեբանական, բժշկական և մանկավարժական վերլուծության է ենթարկվել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հիմնախնդիրը դպրոցականների շրջանում:
2. Բացահայտվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը խոչընդոտող հիմնական գործոնները (սոցիալ-տնտեսական պայմանները, ազգային,

հիմնավորվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման կարևորությունը դպրոցում:

3. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցումը կարող է դառնալ արդյունավետ կանխարգելման միջոց միայն վարակի պատճառագիտության, ախտածագման, փոխանցման ուղիների և կանխարգելման միջոցների լուրջ ուսումնասիրություններից հետո:

4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հիմնական ուղղություններն են՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվություն, կանխարգելման միջոցների տրամադրում ու դրանց օգտագործման հմտությունների ուսուցում, անվտանգ վարքագծի ձևավորում:

5. Ատենախոսությունում որպես ՄԻԱՎ վարակի տարածման նախապայման դիտվել են երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը և դրա վրա ազդող կարևոր գործոնները՝ բնակչության առողջությունը, կյանքի որակը, կենսածնը, կրթական մակարդակը, օրենսդրական դաշտը և պետական քաղաքականությունը:

6. ՄԻԱՎ վարակի տարածումն ունի բարոյական, վարքագծային ուղղվածություն և որպես վարակի կանխարգելման կարևոր գործոն, ներկայացվել է նաև պատմականորեն ձևավորված ազգային բարոյական արժեքների, սովորույթների և ավանդույթների ազդեցությունը:

7. ՄԻԱՎ վարակի դեմ պայքարի լավագույն ուղին լուսավորչական և դաստիարակչական աշխատանքներն են: Այս հարցում առանձնահատուկ մեծ է ՁԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների, հանրակրթական դպրոցների, մանկավարժների և ծնողների ազդեցությունը: Անհրաժեշտ է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցումն իրականացնել հանրակրթական դպրոցների միջին և ավագ դասարաններում:

8. Թե՛ հոգեբանական ու բարոյական, և թե՛ սոցիալական նորմերի իմացությունը կարող է նպաստել պատասխանատու վարքագծի ձևավորմանը, որը շատ կարևոր է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում:

9. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում արդյունավետ մեթոդների, ձևերի, միջոցների ընտրությունը կնպաստի այս բարդ հիմնախնդրի ճանաչմանը և դրա կանխարգելմանը:

10. Անառարկելի է ընտանեկան դաստիարակության կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման և դրա կանխարգելման գործում. ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններ, մեծերի անձնական օրինակ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ազգային ավանդույթներ և սովորույթներ:

11. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է դասավանդող ուսուցչի (մասնագետ-մանկավարժի՝ բժիշկ, կենսաբան, սեքսուաթոլոգ) մասնագիտական-անձնային որակներից. բժշկական, վալեոլոգիական գիտելիքներ, մանկավարժական

✓ Հանրակրթական դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված աշխատանքների մակարդակը զգալիորեն ցածր է հիմնախնդրի լրջության աստիճանից:

✓ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին աշակերտների գիտելիքների մակարդակը բավականին ցածր է, ինչպես նաև անթույլատրելի ցածր է ուսուցիչների գիտելիքների մակարդակը՝ որոշ հարցերի պատասխաններում անգամ ավելի ցածր, քան աշակերտների մոտ:

✓ Հարցման արդյունքներից բացահայտվել է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՄԻԱՎ-ի փոխանցման և վարակվելուց խուսափելու ուղիների վերաբերյալ աշակերտների գիտելիքների ցածր մակարդակը:

✓ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկատվություն ստանալու տեսանկյունից ցածր է աշակերտների վստահությունն ուսուցիչների, մասնագետ-մանկավարժների և ծնողների հանդեպ:

✓ Աշակերտները քիչ են տեղեկացված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արդյունավետ ուսուցման նոր ձևերին (իրավիճակային խաղեր, սեմինար-վարժանք, ինտերակտիվ մեթոդներ և այլն):

✓ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում «ընտանիք-դպրոց» կապի ամրապնդման և արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է կազմակերպել ծնողների և ուսուցիչների «ՄԻԱՎ/ՁԻԱՀ» թեմայով հանդիպումներ, զրույցներ նաև ուսուցում:

✓ Ուսուցիչների գերակշռող մեծամասնությունն այն կարծիքին է, որ այս հիմնախնդրի մասին տեղեկությունները պետք է տրամադրվեն դպրոցական տարիքից, տարբեր տարիքային խմբերում կազմակերպելով դրանց համապատասխան ուսուցում:

✓ Ուսուցիչների մեծամասնությունը կողմնակից է ուսուցման ավանդական մեթոդներին, սակայն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման առավել արդյունավետ ձևն ավանդական և նոր մեթոդների ու միջոցների համատեղումն է:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ատենախոսության հիմնախնդրի հանգամանակից ու խորը ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ եզրակացությունների.

1. Այսօր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը լուրջ սպառնալիք է աշխարհի ողջ բնակչությանը, սպառնալիք նրա համընդհանուր, սոցիալական, տնտեսական, քաղաքական բարեկեցությանը և միլիոնավոր մարդկանց առողջությանը: ՄԻԱՎ-ով կարող է վարակվել յուրաքանչյուրը, սակայն դրան առավել ենթակա են այն անձինք, ովքեր դրսևորում են վտանգավոր վարքագիծ: ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել խոցելի են համարվում պատանիները և երիտասարդները:

2. ՄԻԱՎ-ի նկատմամբ պատանիների և երիտասարդների խոցելիությունը նվազեցնելու նպատակով որպես կանխարգելման միջոց

բարոյական արժեքների կորուստը, երեխաների շեղվող վարքագիծը, ընտանիք-դպրոց թույլ կապը և այլն):

3. Հիմնավորվել է, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցումն անհրաժեշտ է իրականացնել հանրակրթական դպրոցների միջին, ավագ դասարաններում (բժշկության, սանիտարափոխանակ, սեռական, ընտանեկան դաստիարակության հարցերը՝ միջին դասարաններում, իսկ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բարոյական, հասարակական, իրավաբանական հիմնախնդիրները՝ ավագ):

4. Ներկայացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ և միջոցներ, բացահայտվել են նրանց առանձնահատկությունները և համատեղ օգտագործման արդյունավետությունը:

5. Հետազոտվել է ընտանեկան դաստիարակության կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում: Մեկնաբանվել է «ծնող-երեխա» միջանձնային առողջ և փոխվստահությամբ փոխհարաբերությունների կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործընթացում, հետազոտվել են այդ կապի հիմնական տարրերը:

6. Ուսումնասիրվել են դասավանդող մասնագետ-մանկավարժի անձնային և մասնագիտական որակները և նրան ներկայացվող պահանջները (մանկավարժական հմտություններ, տակտ, բժշկական, առողջության պահպանման ոլորտում գիտելիքներ, հոգեբանական իրազեկություն, բարոյական-մարդասիրական հատկանիշներ, աշակերտի հետ երկխոսության կուլտուրա և այլն):

7. Հիմնախնդրի վերաբերյալ աշակերտների և ուսուցիչների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությամբ կարևորվել է դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման անհրաժեշտությունը:

### **Հետազոտության մեթոդաբանական հիմքերը**

Հետազոտության որպես մեթոդաբանական հիմք են հանդես եկել մանկավարժության, սոցիալական մանկավարժության, հոգեբանության, մանկավարժական աքսեոլոգիայի, մանկավարժական վալեոլոգիայի, բժշկագիտության հիմնարար դրույթներն ու մոտեցումները երեխայի սոցիալականացման, նրա անձի ձևավորման ու զարգացման, արժեքային համակարգի, նրա առողջ ապրելակերպի վերաբերյալ (Գ.Շտինովա, Վ.Սլաստենին, Լ.Սարդախան, Յու.Գալագուզովա, Ս.Արզումանյան, Ա.Նազարյան, Ա.Նալչաջյան, Կ.Լենոնհարդ, Ա.Լիչկո, Է.Վայներ, Վ.Բիկովա, Լ.Շիպիցինա, Յու.Լոբզին, Ս.Գրիգորյան, Ռ.Օհանյան, Ա.Պապոյան և այլոք):

### **Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները**

1. Բազմաթիվ խնդիրներ առաջացրած ՄԻԱՎ վարակը նաև վարքագծային հիմնախնդիր է, որի կանխման կարևորագույն ուղին գիտակից, առողջ և պատասխանատու վարքագծի ձևավորումն է: Հետևաբար, պատանիների

և երիտասարդների շրջանում կանխարգելիչ միջոցառումներ անցկացնելը դառնում է կարևոր և անհրաժեշտ:

2. Դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուսուցումը կազմակերպել միջին և ավագ դասարաններում, ծրագրերում նախատեսելով համապատասխան թեմաներ, և այդ թեմաների դասավանդման համար համապատասխան մեթոդներ և միջոցներ:
3. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում կարևոր են դասավանդող մասնագետ-մանկավարժին ներկայացվող նոր պահանջները և այդ պահանջներին համահունչ մանկավարժների վերապատրաստման նոր մոտեցումները:
4. Ընտանիքի որպես երեխայի դաստիարակության առաջնային սոցիալական ինստիտուտի ներգրավումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործընթացում կդառնա դրա իրականացման կարևոր գործոն:

**Հետազոտության տեսական նշանակությունը**

Հետազոտության հիմնախնդրի տեսական համապարփակ վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել և ներկայացնել հանրակրթական դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով կատարվող աշխատանքների օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, պատճառականությունը, հոգեբանամանկավարժական օրինաչափությունները, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման առանձնահատկությունները, մասնագետ-մանկավարժին ներկայացվող պահանջները, ընտանիքի ներգրավումը կանխարգելման գործում:

**Հետազոտության գործնական նշանակությունը**


Ատենախոսության հիմնախնդրի գիտա-մանկավարժական ուսումնասիրության և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել:

հանրակրթական դպրոցներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացի կազմակերպման, դասավանդող մասնագետ-մանկավարժների պատրաստման և ծնողների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների համար, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով երեխաների շրջանում առողջ ապրելակերպի, պատասխանատու վարքագծի ձևավորման գործընթացում:

**Հետազոտության մեթոդները**

- Փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական հայրենական ու արտասահմանյան գրականության վերլուծություն, համեմատություն և համադրություն:
- Սոցիոլոգիական հարցում, հարցազրույցներ, դիտումներ, անկետավորում:

ստացված գիտելիքների մակարդակի բարձրացման արդյունավետությունը կախված է նաև ուսուցման ձևերի և մեթոդների ճիշտ ընտրությունից:



**Գծապատկեր 4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ ձևերը**

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ ձևը մի քանի մեթոդների և միջոցների համատեղումն է (որին, ցավոք, համամիտ է միայն ուսուցիչների 18,4%), բավականին արդյունավետ է համարվում ուսուցման նոր մեթոդների կիրառումը, սակայն վերոնշյալ հարցի տվյալներից ակնհայտ է այն փաստը, որ ժամանակակից մանկավարժությունում առավել արդյունավետ համարվող ուսուցման մեթոդները, ինչպիսիք են իրավիճակային խաղերը, նշել է միայն ուսուցիչների 2%-ը, քիչ են նաև այն ուսուցիչները, որոնք նշել են վարժանքները` 15,1%, ուսուցման ինտերակտիվ մեթոդը` 22,4%: Հարցման ենթարկվածներն առավել շատ են նշել ուսուցման ավանդական ձևերը, օրինակ` դաս, դասախոսություն` 59,2%, զրույց` 67,1%:


Ուսուցիչներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ ձևերին և մեթոդներին տեղեկացնելու համար անհրաժեշտ է դրանց արդյունավետ կիրառման հստակ համակարգ` ըստ համապատասխան առարկաների և տարիքային խմբերի:

Երրորդ գլխի վերջում ամփոփվել են հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքները:



**Հարցում ուսուցիչների շրջանում**

**Հարց 1. «Պարտադիր եք համարում, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկություններ տրամադրվեն դպրոցական տարիքից»:**



**Գծապատկեր 3.**

**Ուսուցիչների կարծիքն աշակերտներին դպրոցական տարիքից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկություններ տրամադրելու մասին**

Վերոնշյալ հարցի պատասխանները գոհացնող են: Հարցման ենթարկված ուսուցիչների 97,3% պարտադիր է համարում, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկություններ տրամադրվեն դպրոցական տարիքից, 0,7% ունի «այլ» կարծիք, որը հիմնականում համընկնում է դրական կարծիքների հետ, ուղղակի նրանք նշել են, թե որ տարիքային խմբերում կարելի է կազմակերպել աշակերտների ուսուցումը (միջին դասարաններում, ավագ դպրոցում, բժիշկների կողմից և այլն), միայն ուսուցիչների 2% է բացասական մտտեցել այս հարցին. դա խոսում է նման ուսուցիչների այս խնդրի նկատմամբ ցածր իրազեկության մասին:

Այս հարցի պատասխանները համարում ենք գոհացնող, որը համընկնում է ինչպես աշխարհի տարբեր մասնագետների կողմից առաջարկած, այնպես էլ մեր աշխատանքում ներկայացված այն կարծիքին, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի դպրոցական տարիքից:

**Հարց 2. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների կազմակերպման որ ձևերն եք համարում առավել արդյունավետ»:** Մանկավարժությունում հայտնի է, որ բացի ուսուցանվող առարկայի ծավալից և դասավանդման որակից,

- Հետազոտության արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական մշակում ու վերլուծություն:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն** ապահովված են հետազոտված համակազմի ընդգրկումն քանակակազմով /813/, հետազոտության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փաստացի նյութի մաթեմատիկական մանրամասն մշակմամբ և հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Հետազոտության տեսական ու գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև հրատարակված հոդվածների քանակով, հետազոտության արդյունքների քննարկումներով ու ելույթներով:

**Հետազոտության կատարման փուլերը**

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում /2007-2009թթ./ կատարվել է հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, բժշկագիտական, հոգեբանական, սոցիոլոգիական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:

Երկրորդ փուլում /2009-2010թթ./ սոցիոլոգիական հարցումների անցկացում ք.Երևանի և հանրապետության տարբեր մարզերի դպրոցներում (վարժարան, քոլեջներ):

Երրորդ փուլում /2010-2012թթ./ ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծության և ընդհանրացման հիման վրա աշխատանքի շարադրում:

**Հետազոտության արդյունքները և եզրակացությունները** ներկայացվել և քննարկվել են ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտատեսական սեմինարներում, մի շարք գիտաժողովներում: Ամբողջական աշխատանքը քննարկվել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնում: Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակված է 9 հոդված:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը**

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային 157 էջ ծավալով: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից /77 անուն գիրք, 31 հանդես, 4 համացանցային աղբյուր/, ծավալուն հավելվածներից: Ատենախոսության տեքստը պարունակում է 1 նկար, 19 գծապատկեր, 16 աղյուսակ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Ներածությունում** հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիակա-  
նությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը,  
առարկան, վարկածը, խնդիրները, մատնանշվել են հետազոտության  
գիտական նորոյթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, տեսական  
և գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը,  
մեթոդները, հետազոտության արդյունքների հավաստիությունը և  
հիմնավորվածությունը, հետազոտության կատարման փուլերը, արդյունքներն  
ու եզրակացությունները, ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրվել է «**ՄԻԱՎՁԻԱԿ-ը որպես  
սոցիալ-տնտեսական և մանկավարժական հիմնախնդիր**» և ունի չորս  
ենթագլուխ:


**Առաջին «ՄԻԱՎ վարակի պատճառագիտությունը և ախտաճառումը»  
ենթագլխում** ներկայացվել են ՄԻԱՎ վարակի ծագման վերաբերյալ  
շրջանառվող վարկածները, ՄԻԱՎ վարակի պատճառագիտությունը և  
ախտաճառումը՝ ինչպես է ՄԻԱՎ վարակը ներթափանցում մարդու օրգանիզմ  
և ախտահարում իմունային (պաշտպանական) համակարգը: ՄԻԱՎ-ի  
կանխարգելման նպատակով ուսումնասիրվել են վարակի զարգացման  
շրջանները. պատուհանի շրջան, անախտանշանային շրջան և վերջնային՝  
ՁԻԱԿ-ի փուլ: Ներկայացվել է նաև մեր պետության կողմից երաշխավորված  
հակառետրոպիկոսային դեղերով բուժման առանձնահատկությունները:

**Երկրորդ «ՄԻԱՎ վարակի փոխանցման ուղիները և կանխարգելման  
միջոցները» ենթագլխում** ներկայացվել են ՄԻԱՎ վարակի փոխանցման  
ուղիները. ՄԻԱՎ-ի փոխանցումը սեռական ճանապարհով, արյան միջոցով,  
ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխային և ինչպես չի փոխանցվում ՄԻԱՎ-ը:

ՄԻԱՎ-ով կարող է վարակվել յուրաքանչյուրը, սակայն դրան առավել  
ենթակա են այն անձինք, ովքեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով  
համարվում են ՄԻԱՎ վարակի նկատմամբ առավել խոցելի և վարակի  
տարածման հարցում առավել ռիսկային, նրանց թվում են նաև պատանիները  
և երիտասարդները: Այդ նպատակով բացահայտվել և վերլուծվել են  
պատանիների և երիտասարդների ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելիության  
պատճառները, այն պայմանավորող գործոնները և նրանց խոցելիությունը  
նվազեցնելու ուղղությունները:

**Երրորդ «Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը որպես ՄԻԱՎ վարակի  
տարածման նախապայման» ենթագլխում** բացահայտվել և վերլուծվել են  
սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխություններ ապրող  
մեր երկրում ՁԻԱԿ-ի տարածումը խթանող գործոնները՝ միգրացիա,  
թմրամոլություն, մարմնավաճառություն և այլն:

**Հարց 2. «Ու՞մ միջոցով եք նախընտրում ստանալ տեղեկություններ  
ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի մասին»:** Այս հարցի պատասխանները շատ կարևոր են  
ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի մասին գիտելիքների ուսուցման ամբողջ գործընթացի  
կազմակերպման, ինչպես նաև վարքագծային նորմերի դաստիարակության  
համար: Հարցման արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ում:




**Գծապատկեր 2.  
ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի մասին տեղեկացվածության նախընտրելի  
աղբյուրների տվյալները**

Արդյունքները վկայում են այն մասին, որ տվյալ հարցի վերաբերյալ  
աշակերտները չունեն ամբողջական պատկերացում: Այն դեպքում, երբ  
հարցման մասնակիցներին հնարավորություն էր տրվել ընտրել մեկից ավելի  
պատասխան, միայն աշակերտների 51,7% է նախընտրել գիտելիքները  
ստանալ ուսուցիչներից, 52,8%-ը մասնագետ-մանկավարժից: Այս ցուցանիշը  
վկայում է այն մասին, որ աշակերտների մոտավորապես կեսը չի վստահում  
ուսուցիչներին: Ցածր է նաև աշակերտների վստահությունը ծնողների  
հանդեպ (ընդամենը 31,6%), որը կարող է ունենալ մի շարք պատճառներ՝  
կարծրատիպեր, անվստահություն, վախ, ծնողների գիտելիքների ցածր  
մակարդակ և այլն:

Այս հարցման տվյալները նորից փաստում են խնդրի լրջության մասին:  
ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի մասին գիտելիքների ուսուցման և կանխարգելման  
արդյունավետության համար առաջարկվել է «աշակերտ-ուսուցիչ-ծնող»  
արդյունավետ համագործակցության ամրապնդում:

## Հարցում աշակերտների շրջանում

**Հարց 1. «Ինչպե՞ս է փոխանցվում ՄԻԱՎ-ը»:** Այս հարցն ուղղակիորեն կապված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման խնդրի հետ, քանի որ իմանալ ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ նշանակում է կարողանալ մշակել և կիրառել կանխարգելիչ վարքագիծ: Սակայն պատասխանների արդյունքները, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում, գոհացնող չեն:



**Գծապատկեր 1.**  
**ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները**

Վերոնշյալ արդյունքների դրական կողմն այն է, որ ՄԻԱՎ-ի փոխանցման ամենակարևոր ուղիները նշված են ամենաբարձր տոկոսներով: Սակայն անգամ 80% ճիշտ պատասխանը տվյալ լուրջ հիմնախնդրի համար բավարար չէ, քանի որ մնացած 20% կարող է դրսևորել ռիսկային վարքագիծ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին ճիշտ գիտելիքների բացակայության մասին է վկայում այն, որ աշակերտներից ոմանք նշել են, որ հնարավոր է վարակվել անգամ համբույրի միջոցով (19,1%), մոծակի կծելու միջոցով (13,8%), նույն բաժակից օգտվելիս (5,1%), ընտանի կենդանիներից (1,6%):

Հարցի արդյունքների վերլուծությունից ակնհայտ է, որ աշակերտների մոտ բացակայում են հստակ գիտելիքներ ՄԻԱՎ վարակի փոխանցման ուղիների մասին: Հարցի լուծման նպատակով անհրաժեշտ է ստեղծել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման արդյունավետ համակարգ:

ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացումը ցույց է տվել, որ հիվանդությունն առավել արագ է տարածվում այնտեղ, որտեղ գերիշխում են նախապաշարմունքները, աղքատությունն ու անհավասարությունը, միջոցների սղությունն ու ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, աղքատությունը, գործազրկությունն անուղղակիորեն խթանում են ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը:

Ենթազխում ուսումնասիրվել է ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակը, որից ուղղակիորեն կախված է կրթության, առողջապահության, ապահովագրության ցուցանիշները, որոնք ձևավորում են կանխարգելման և բուժման արդյունավետությունը:

**Չորրորդ «ՄԻԱՎ վարակի կանխարգելմանը նպաստող հիմնական գործոնները» ենթազխում** մեկնաբանվել են ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի տարածման նվազեցման և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակին արդյունավետ հակազդման ձևավորմանն ուղղված ծրագրերը, ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում օրենսդրական դաշտի բարեփոխումներին ուղղված աշխատանքները, որոնք նպաստում են հիմնախնդրի արդյունավետ լուծմանը:

Հաշվի առնելով ՄԻԱՎ վարակի տարածման բարոյական, վարքագծային ուղղվածությունը, մեկնաբանվել է պատմականորեն ձևավորված ազգային բարոյական արժեքների ու նորմերի, սովորույթների, ավանդույթների պահպանման, ազգային դաստիարակության համակարգի ստեղծման կարևորությունը և առանձնահատկությունները, բացահայտվել են դրանց ազդեցությունը ՄԻԱՎ-ը կանխարգելիչ վարքագծի ձևավորման վրա:

Վերլուծվել են նաև հոգևոր դաստիարակության միջոցով հասարակության, հատկապես պատանիների և երիտասարդների մեջ բարոյական և հոգևոր արժեքների ամրապնդման առանձնահատկությունները, որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման կարևոր նախապայման, մատնանշելով այս գործում եկեղեցու առանցքային դերը:

Մեկնաբանվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական-բարոզչական միջոցառումների իրականացման գործընթացում զանգվածային լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների, հանրակրթական դպրոցների (մասնավորապես՝ մանկավարժների և ծնողների) ակտիվ մասնակցության կարևորությունը և առանձնահատկությունները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** կրում է **«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գիտատեսական, հոգեբանական և մանկավարժական հիմքերը»** խորագիրը, որը բաղկացած է չորս ենթազխից:

Առաջին **«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գիտատեսական հիմքերը» ենթազխում** ուսուցման գիտատեսական հիմքերի բացահայտման նպատակով վերլուծվել են ուսուցման և դաստիարակության սկզբունքները և

ներկայացվել են դրանց կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում:

Դպրոցում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցումը ոչ միայն մանկավարժական գործընթաց է, այլ նաև բժշկական, հոգեբանական և բարոյական, ուստի վերլուծվել են նաև դաստիարակության հոգեբանա-բարոյական ներդաշնակության, սեռական փոխհարաբերությունների մշակույթի դաստիարակության, «Առողջ ապրելակերպ» հայեցակարգի ձևավորման գիտատեսական սկզբունքները:

**Երկրորդ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման հոգեբանական հիմքերը» ենթազխում** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման հոգեբանական հիմքերը բացահայտելու և ՄԻԱՎ վարակի արդյունավետ կանխարգելման նպատակով վերլուծվել են պատանիների և երիտասարդների վարքագծի յուրահատկությունները բացահայտող տարատիպերը կամ հակազդումները, բնավորության շեշտված գծերը, շեղվող վարքագիծը, դրանց առանձնահատկությունները, որոնք կարող են ռիսկային, անպատասխանատու վարքագծի պատճառը լինել և հիմնավորվել են դրանց ուսումնասիրության կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում:

**Երրորդ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման մանկավարժական պայմանները» ենթազխում** վերլուծվել են ուսուցման կազմակերպման այն ձևերը, մեթոդները և միջոցները (դաս, դասարանային ժամ, նախագծային գործունեություն, սեմինար-վարժանք, հոգեբանական խաղեր, ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, խմբային աշխատանքներ, «հավասարը-հավասարին» ուսուցման մեթոդ և այլն), որոնք առավել արդյունավետ են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում:

Մեկնաբանվել և վերլուծվել են նաև դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման գործընթացում մանկավարժի անձնային և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները. մանկավարժական հմտություններ, բժշկության, առողջության պահպանման ոլորտում գիտելիքներ, մանկավարժական կուլտուրա, հոգեբանական իրազեկություն, մանկավարժական տակտ, հեղինակություն, բարոյական-մարդասիրական հատկանիշներ, աշակերտի հետ երկխոսության կուլտուրա:

**Չորրորդ «Ընտանեկան դաստիարակությունը որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման կարևոր նախապայման» ենթազխում** վերլուծվել են ընտանեկան դաստիարակության կարևորությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների ուսուցման և կանխարգելման գործընթացում. ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններ, մեծերի անձնական օրինակ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ազգային ավանդույթներ և սովորույթներ:

Վերլուծվել են նաև ընտանիքում երեխայի սեռական դաստիարակության հիմքերը, կարևորվել է ընտանիքի դերը երեխաների ճիշտ դաստիարակության, աճող մարդու բարոյահոգեբանական նկարագրի ձևավորման, սեռերի փոխհարաբերությունների բարոյական մշակույթի տիրապետման գործում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է «դպրոց-ընտանիք» կապից, այդ նպատակով վերլուծվել են դրա արդյունավետ համագործակցության առանձնահատկությունները:

Ատենախոսության **երրորդ գլուխը** հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների գիտական վերլուծությունն է:

Հանրակրթական դպրոցներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին աշակերտների գիտելիքների մակարդակի ստուգման, ինչպես նաև ուսուցիչների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների մակարդակի և ուսուցման գործընթացի վերաբերյալ տեսակետների բացահայտման նպատակով անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ:

Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 813 մարդ, որից հանրակրթական դպրոցների 9-11-րդ դասարանների 509 աշակերտ (ք. Երևանից 239, Տավուշի մարզից 70, Լոռու մարզից 68, Շիրակի մարզից 55, Կոտայքի մարզից 47 և Արագածոտնի մարզից 30 աշակերտ) և նույն հանրակրթական դպրոցների 304 ուսուցիչ (ք. Երևանից 115, Լոռու մարզից 46, Կոտայքի մարզից 44, Շիրակի մարզից 42, Տավուշի մարզից 41 և Արագածոտնի մարզից 16): Հարցման ենթարկված աշակերտների 60,7% և ուսուցիչների 69,7% իզական սեռի են:

Սոցիոլոգիական հարցումների անցկացման համար պատրաստվել է երկու տեսակի հարցաթերթիկ՝ նախատեսված աշակերտների (բաղկացած 10 հարցից) և ուսուցիչների (բաղկացած 9 հարցից) համար: Ստացված տվյալները մշակվել և վերլուծվել են համակարգչային Microsoft Access և Microsoft Excel ծրագրերի միջոցով, որի հիման վրա կառուցվել են աղյուսակներ և գծապատկերներ: Աշխատանքում ներկայացվում են ինչպես հարցումներին մասնակցությունն ըստ աշակերտների և ուսուցիչների, այնպես էլ ըստ հարցադրումներից յուրաքանչյուրի /10 և 9 հարց/ արդյունքների վերլուծությունները՝ աղյուսակներով ու գծապատկերներով:

Ստորև ներկայացված են սոցիոլոգիական հարցումների հարցերից մի քանիսը և հարցմանը մասնակցած աշակերտների ու ուսուցիչների պատասխանները և ստացված արդյունքների վերլուծությունները: